ՀՀ ազգային անվտանության ծառայության պետ
Գորիկ Հակոբյանին

թիվ՝ 18100115 քրեական գործով տուժողի իրավահաջորդ
Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ՝

1. Արթուր Ալբերտի Սաքունց
2.Արայիկ Միքայելի Զալյան
Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Հանցագործության մասին հաղորդում

1.Գործի նախապատմությունը.

1.1. 2015թ. հունվարի 13-ին, ժամը 00:15-ի սահմաններում հայ-թուրքական պետական սահմանին Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ծառայողները ձերբակալել են պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարող անծանոթ անձի, որը հետագայում պարզվել է, հետախուզման մեջ գտնվող, սպանությունների կատարման մեջ կասկածվող Վալերի Պերմյակովն է:

1.2. Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ծառայողները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարելու համար Վալերի Պերմյակովին ձերբակալել և հանձնել են Ռուսաստանի Դաշնության 102-րդ ռազմաբազայի ներկայացուցիչներին:

2.Քրեական գործ հարուցելու վերաբերյալ իրավական հիմնավորումներ.

ՀՀ ազգային անվտանգության մարմինների մասին օրենքի 9-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ «ազգային անվտանգության մարմինների գործունեությունը, դրանց կողմից կիրառվող մեթոդներն ու միջոցները չպետք է խախտեն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, վնասեն մարդկանց կյանքին, առողջությանը, գույքին և շրջակա միջավայրին»:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ պետական սահմանի պահպանությունն իրականացնում են սահմանապահ զորքերը՝ ՀՀ օրենսդրությանը և ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան»:

ՀՀ ազգային անվտանգության մարմինների մասին օրենքի 16-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ «ազգային անվտանգության մարմինները պարտավոր են՝ բացահայտել, կանխել և խափանել իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունները, իրականացնել այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը.

Նույն հոդվածի ժթ) կետի համաձայն՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան իրականացնել ՀՀ պետական սահմանի պահպանությունը»:

ՀՀ պետական սահմանի մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «պետական սահմանի պահպանությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգի անբաժանելի մասն է

և ընդգրկում է քաղաքական, իրավական, տնտեսական, ռազմական, օպերատիվ, կազմակերպչական, տեխնիկական, ռեժիմային, բնապահպանական, մշակութային և այլ միջոցառումներ, որոնք երաշխավորում են՝

ա) պետական սահմանի անձեռնմխելիությունը.

բ) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետական սահմանի ռեժիմի, սահմանային ռեժիմի և պետական սահմանի անցման կետերի ռեժիմի պահպանման ապահովումը.

գ) պետական սահմանում անձի, հասարակության և պետության համար կենսական շահերի պաշտպանությունն արտաքին և ներքին սպառնալիքներից»:

ՀՀ պետական սահմանի մասին օրենքի 28-րդ հոդվածի գ) կետի համաձայն՝ «Ազգային անվտանգության մարմինների օպերատիվ-հետախուզական աշխատանքն ուղղում է պետական սահմանով օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, հանցավոր խմբերի և առանձին անձանց ապօրինի գործունեությունը բացահայտելուն, կանխելուն ու խափանելուն»:

2015թ. հունվարի 13-ին, ժամը 00:15-ին հայ-թուրքական պետական սահմանին Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ծառայողները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարող անծանոթ անձին հայտնաբարելով, որևէ տեղեկություն չեն փոխանցել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ իրավապահ մարմիններին, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ իրավապահ մարմիններն էլ, իրենց հերթին, տեղեկություն չեն պահանջել: Հետագայում նույնպես, երբ արդեն պարզ է դարձել, որ տվյալ անձը հանդիսանում է հետախուզման մեջ գտնվող Ռուսաստանի Դաշնության 102-րդ ռազմաբազայի զինծառայող Վալերի Պերմյակովը, ով կասկածվում էր Գյումրիի Մյասնիկյան 188 տանը տեղի ունեցած սպանությունների կատարման մեջ, ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից տեղեկություն չի տրամադրվել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ իրավապահ մարմիններին, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ իրավապահ մարմինները տեղեկատվություն չեն պահանջել:

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ներկայացուցիչները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու ցանկացած դեպքում պարտավոր են կատարել 1992թ. սեպտեմբերի 30-ի «ՀՀ տարածքում տեղակայված ռուսաստանյան սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության պայմանների մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, որը բացառում է Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ներկայացուցիչների կողմից ինքնուրույն հետաքննչական գործողություններ իրականացնել և սահմանում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության և իրավապահ մարմինների հետ համատեղ օպերատիվ հետախուզական աշխատանք, պետական սահմանը խախտելու վերաբերյալ համատեղ հետաքննություն և համատեղ անհետաձգելի գործողություններ՝ համաձայն ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի:

ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարած հետախուզման մեջ գտնվող և սպանությունների կատարման մեջ կասկածվող Վալերի Պերմյակովին ապօրինի ձերբակալել և հանձնել են Ռուսաստանի Դաշնության 102-րդ ռազմաբազայի ներկայացուցիչներին: Հետախուզման մեջ գտնվող Վալերի Պերմյակովը, հայ-թուրքական սահմանի մոտից ՌԴ սահմանապահ զորքերի ներկայացուցիչների վերահսկման ներքո անցնելով շուրջ 17 կիլոմետր, տեղափոխվել է Գյումրիում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազա:

ՌԴ սահմանապահ զորքերի և 102-րդ ռազմաբազայի ներկայացուցիչների կողմից թույլ տրված ապօրինությունը՝ հետախուզման մեջ գտնվող Վալերի Պերմյակովին առանց ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից ձերբակալելը և առևանգման միջոցով տեղափոխելը ՀՀ իրավապահ մարմինների կողմից չի կանխվել, չնայած նրան, որ պաշտոնապես հայտարարվել էր, որ ՀՀ իրավապահ մարմինների կողմից ճանապարհները վերահսկվում են և բոլոր գործողությունները կատարվում են համատեղ:

ՀՀ իրավապահ մարմինները ՌԴ սահմանապահ զորքերի ներկայացուցիչների և ՌԴ 102-րդ ռազմաբազայի ղեկավարության հետ համատեղ իրականացրել են Վալերի Պերմյակովի նկատմամբ ապօրինի ձերբակալություն, հետագայում՝ ՀՀ իրավապահ մարմինները ապօրինի ձերբակալված Վալերի Պերմյակովին թույլ են տվել ապօրինի տեղափոխել Ռուսաստանի Դաշնության 102-րդ ռազմաբազայի տարածք, որտեղ նա ներկայումս գտնվում է:

Սույն գործողություններն իրենց մեջ պարունակում են մի շարք հանցակազմեր՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի՝ արդարադատության և պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հիմքերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ ազգային անվտանգությանը տրված լիազորություններով, դիմում ենք Ձեզ՝ Ձեր լիազորությունների սահմաններում ձեռնարկել համապատասխան միջոցները կատարված հանցագործությունը բացահայտելու, քրեական գործ հարուցելու և հանցագործություն կատարած անձին (անձանց) պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Կից ներկայացնում ենք. թիվ 18100115 քրեական գործով Արայիկ Զալյանի և Արթուր Սաքունցին տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչ ճանաչելու մասին որոշումների պատճենները:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ՝ Ա. Սաքունց

Ա. Զալյան

03.06.2015թ.

ՈՐՈՇՈՒՄ

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ճանաչելու մասին

« 19 » փետրվարի 2015թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Ս Աղաբաբյանս, վերանայելով վարույթիս թիվ 18100115 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2015թ. հունվարի 12-ին՝ ժամը 06-ի սահմաններում, ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-ր ռազմաբազայի թիվ 04436 զորամասի տանկային գումարտակի 1-ին տանկային վաշտ ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը մուտք է գործել Գյումրի քաղաքի Մյասնիկյա փողոցի 188-րդ տուն, որտեղ երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ իր մոտ եղած ԱԿՍ-74 տեսակի 1283689 համարի ինքնաձիգից արձակա կրակոցներից տեղում սպանել է նույն տան բնակիչներ Սերյոժա Ավետիսյանին, Հասմի Ավետիսյանին, Աիդա Ավետիսյանին, Արմեն Ավետիսյանին, Արաքսյա Պողոսյանին մանկահասակ Հասմիկ Ավետիսյանին, որից հետո առանձին դաժանությամբ մանկահասա Սերյոժա Ավետիսյանին սպանելու դիտավորությամբ սվին-դանակով բազմաթիվ հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, սակայն դիտավորությունն ավարտին չի հասցրել ի կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Սերյոժա Ավետիսյանը ժամանակին հայտնաբերվ և տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում Հ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մաս հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը շարունակվում է ՀԿԳ քննության գլխավո վարչությունում:

2015թ-ի հունվարի 28-ին Անդրանիկ Սենիկի Պողոսյանը քրեական գործով ճանաչվել տուժողներ Արաքսյա Անդրանիկի Պողոսյանի, Հասմիկ Արմենի Ավետիսյանի և Սերյոժա Արմեն Ավետիսյանի իրավահաջորդ:

2015թ. փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությու տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Սենիկի Պողոսյանից ստացվել է դիմում՝ որով վերջին լիազորել է Արթուր Սաքունցին ճանաչել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով Անդրանիկ Սենիկի Պողոսյանը ճանաչվել է տուժող իրավահաջորդ և լիազորել Արթուր Սաքունցին հանդես գալու իր՝ տուժողի իրավահաջորդ ներկայացուցիչ, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարությա օրենսգրքի 55-րդ, 78-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով Արթուր Սաքունցին ճանաչել տուժողի իրավահաջորդ Անդրան Սենիկի Պողոսյանի ներկայացուցիչ:

2. Որոշման մասին հայտնել Արթուր Սաքունցին, պարզաբանելով ՀՀ քրեակա դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքները պարտականությունները:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Գ. Ս. Աղաբաբյան

ՈՐՈՇՈՒՄ

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ճանաչելու մասին

« 18 » փետրվարի 2015թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Ս. Աղաբաբյանս, վերանայելով վարույթիս թիվ 18100115 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2015թ. հունվարի 12-ին՝ ժամը 06-ի սահմաններում, ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայի թիվ 04436 զորամասի տանկային գումարտակի 1-ին տանկային վաշտի ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը մուտք է գործել Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի 188-րդ տուն, որտեղ երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ իր մոտ եղած ԱԿՍ-74 տեսակի 1283689 համարի ինքնաձիգից արձակած կրակոցներից տեղում սպանել է նույն տան բնակիչներ Սերյոժա Ավետիսյանին, Հասմիկ Ավետիսյանին, Աիդա Ավետիսյանին, Արմեն Ավետիսյանին, Արաքսյա Պողոսյանին և մանկահասակ Հասմիկ Ավետիսյանին, որից հետո առանձին դաժանությամբ մանկահասակ Սերյոժա Ավետիսյանին սպանելու դիտավորությամբ սվին-դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, սակայն դիտավորությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Սերյոժա Ավետիսյանը ժամանակին հայտնաբերվել և տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը շարունակվում է ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

2015թ-ի հունվարի 28-ին Անդրանիկ Սենիկի Պողոսյանը քրեական գործով ճանաչվել է տուժողներ Արաքսյա Անդրանիկի Պողոսյանի, Հասմիկ Արմենի Ավետիսյանի և Սերյոժա Արմենի Ավետիսյանի իրավահաջորդ:

2015թ. փետրվարի 18-ին տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Սենիկի Պողոսյանը դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ լիազորելով Արայիկ Միքայելի Զալյանին ճանաչել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով Անդրանիկ Սենիկի Պողոսյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և լիազորել Արայիկ Միքայելի Զալյանին հանդես գալու իր՝ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 78-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով Արայիկ Միքայելի Զալյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Սենիկի Պողոսյանի ներկայացուցիչ:
2. Որոշման մասին հայտնել Արայիկ Միքայելի Զալյանին, պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքները և պարտականությունները:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Գ. Ս. Աղաբաբյան